



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱԿՅԻՆ ԱՄԵՐԻԿԱԿՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**Ս. ԱՍՏՈՒԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ,
ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ ԿԼԵՆՏԵՅԼԻ
Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ**

Կիրակի, Օգոստոս 17-ը, տօնն է Սուրբ Աստուածածնայ վերափոխման, մեր եկեղեցւոյ հինգ տաղաւարներէն մէկը: Աստուածածնայ տօնը նաեւ տօնն է Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ անուանակոչութեան:

Այս տօնին առիթով, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ Ս. եւ Անմահ պատարագ պիտի մատուցուի, ապա տեղի պիտի ունենան անդաստանի եւ խաղողօրհնէքի ականդական արարողութիւնները:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան պիտի պատարագէ եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ Կլենտէյլի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Ս. Պատարագի ընթացքին, գնահատելով եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Կոմիտաս Քիւյ. Թորոսեանի եւ Արժ. Տ. Վազգէն Քիւյ. Աթմաճեանի ծառայութիւնները, Առաջնորդ Սրբազան Հայրը սել ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք պիտի շնորհէ անոնց:

Ս. Պատարագի ավարտին, Առաջնորդ Սրբազանը պիտի կատարէ մատաղօրհնէքն եւ խաղողօրհնէքը:

Շաբաթ, Օգոստոս 16-ի երեկոյեան, եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առիթով, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ պիտի կատարուի նախատօնակի հսկում. եկեղեցին իր դուռները բաց պիտի պահէ մինչեւ կես գիշեր, ուխտաւոր հաւատացեալներու համար:

**PRELATE TO CELEBRATE THE FEAST OF THE ASSUMPTION OF
THE HOLY MOTHER OF GOD AT ST. MARY'S CHURCH IN
GLENDALE**

Sunday, August 17th is the Feast of the Assumption of the Holy Mother of God, as well as the name day of St. Mary's Church in Glendale. On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon at St. Mary's Church. The Prelate will also conduct the blessing of *madagh* and grapes following Divine Liturgy.

During the service, the Prelate will bestow Rev. Fathers Vazken Atmajian and Gomidas Torossian with the honor of bearing an ornamental cope (*dzaghgya pilon*) for their years of dedicated service.

On Saturday, August 16th, eve of the Feast services will take place inside the church, and the doors of the church will remain open until midnight.

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ, Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԽԱՂՈՂՕՐՅՆԷՔ՝ «ԱՐԱՐԱՏ ՏԱՆ» ՄԷՋ

Տարիներու աւանդութեան համաձայն, Ուրբաթ, Օգոստոս 15-ին, կ. ա. ժամը 10:00-ին, Աստուածածնայ Վերափոխման տօնին առթիւ, հանդիսապետութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Յօր եւ մասնակցութեամբ հոգեւոր հայրերուն, խաղողօրհնէքի արարողութիւն տեղի ունեցաւ Mission Hills-ի «Արարատ Տան» հիւանդանոցի բաժնիին մէջ, որմէ ետք Ս. Պատարագ մատուցուեցաւ «Արարատ Տան» մատրան մէջ:



Ս. Պատարագը մատուցանեց եւ քարոզեց Վենքուվըրի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Յոգեւոր Յովիւ՝ Յոգշ. Տ. Յուսիկ Վրդ. Մարտիրոսեան, որ հիւրաբար Լոս Անճելըս կը գտնուի:

Յաւարտ Ս. Պատարագի, եւ համաձայն տարիներու աւանդութեան, Առաջնորդ Սրբազանն ու հոգեւոր հայրերը մտերմիկ պահ մը բոլորեցին հաստատութեան պատսպարեալներուն ու անձնակազմի անդամներուն հետ:

DIVINE LITURGY AND BLESSING OF GRAPES AT ARARAT HOME ON THE FEAST OF THE ASSUMPTION OF THE HOLY MOTHER OF GOD

By the ordinance of the Prelate and in keeping with tradition, on the morning of Friday, August 15th, the Feast of the Assumption of the Holy Mother of God was celebrated at Ararat Home in Mission Hills with Divine Liturgy and the blessing of grapes.

Very Rev. Fr. Housig Mardirossian, pastor of St. Gregory the Illuminator Church in Vancouver, British Columbia, celebrated Divine Liturgy and delivered the sermon in the chapel.

Following the service, the Prelate and clergy members met with the residents and directors.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՑԻ Հ.Մ.Ը.Մ. ԲԱՆԱԿՈՒՄԻ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ

Ուրբաթ, Օգոստոս 15-ի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.-ի Թաքոյա բանակավայրին մէջ, տեղի պիտի ունենայ Հ.Մ.Ը.Մ.-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու 5-րդ Ընդհանուր Բանակումի փակման պաշտօնական հանդիսութիւնը, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկաուտական Խորհուրդին:

Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ արարողութեան եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւններն ու բարի մաղթանքները: Առաջնորդ Սրբազանին պիտի ընկերանան Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան եւ Արժ. Տ. Աշոտ Քիւյ. Գամպուրեան:

PRELATE TO PARTICIPATE IN CLOSING CEREMONY OF HOMENETMEN 5TH REGIONAL JAMBOREE

On the afternoon of Friday, August 15th, the closing of the Homenetmen 5th Regional Jamboree will take place at Camp Tecuya. The Jamboree is organized by the Regional Executive and Scouting Council of Homemenetmen.

The Prelate will attend the ceremony and convey his blessings and well wishes. He will be accompanied by Very Rev. Fr. Muron Aznikian and Rev. Fr. Ashod Kambourian.

More than 600 scouts are expected to participate in the closing, which will include a flag ceremony and remarks by Homenetmen leaders.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՒ «ԱՍՊԱՐԷԶ»Ի 100-ԱՄԵԱԿԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ

Հինգշաբթի, Օգոստոս 14-ի երեկոյեան, յատուկ ընդունելութեամբ մը,



«Ասպարէզ» օրաթերթը տօնեց իր հիմնադրութեան 100-ամեակը, որ տեղի ունեցաւ թերթի խմբագրատան շրջափակին մէջ: Առաջնորդ Սրբազանը ներկայ եղաւ ընդունելութեան եւ փոխանցեց իր օրհնութիւններն ու գնահատանքը, ինչպէս նաեւ յուշանուէր մը յանձնեց թերթի խմբագրապետին՝ Տիար Աբօ Պօղիկեանի: Ձեռնարկին ներկայ էին թերթի բարերարներն ու բարեկամները:

PRELATE ATTENDS ASBAREZ 100TH ANNIVERSARY RECEPTION

On the evening of Thursday, August 14th, Asbarez newspaper celebrated its 100th anniversary with a reception in the courtyard of their offices.

The Prelate attended the reception and conveyed his blessings and commendation, and presented editor Mr. Apo Boghikian with a memento. Asbarez sponsors and friends were also in attendance.